

Խմբագրական	էջ
Խմբ. — Միհիթար՝ Ս. Գրքի 1500ամեակի լոյսերուն մէջ	113
Խմբ. — Ապրիլեան Նահատակներու կարմիր քսանամեակին.	117
Հայկական մեմարտն	
Հացունի Հ. Վարդան. — Մովսէս Խորենացին կը գառնայ ի հինգերորդ դար	119
Արմառունի Հ. Կարապետ. — Ազգեցութիւն Յուստինեան - Հռոմէական օրինաց Հայկական իրաւունքին վրայ, և աստիճան այդ ազգեցութեան	131
Արշանեան Գ. Արքեպս. — Պատառիկներ լուսածիր շաբաթացեալ վանքերէն	139
Գեղարուեստ (Բայկ.)	
Սագրեան Արմենակ. — Քէօթահիայի յախճատակիներու հարցը (Թրգմ. Ֆրու. Միքայէլ Ալէմշահ)	142
Գրախօսական	
Երևեան Հ. Սիմոն. — «Արդի Եթովպական» (Հայկ Բաթաբանի) — «Մասիս» տարեգիրք (Խմբ. Արմէն Սեւանի) — «Ծնկեր փանջունի» (Երուանդ Օտեանի. հատարակութիւն Ն. Գ. Բ. հո. 9) — «Քսանեւհինգ տարուան կեանք մը» (Յ. Թ. Հինգլեանի)	158
Կենսագրական	
Պագայեան Եդուարդ. — Սահարայի ճրանառութ Հ. Շարլ ու ֆուզոյ	164
Թատրոն	
Երևեան Արամ. — Ռուսահայ թատրոնի պատմութիւնը	150
Հայկական մանուլ	
Հ. Ե. Փ. — Հանդէս հանդիսից (Անահիտ) 169	
Ազգային քրոնիկ	
Խմբ. — Լուսանորոգն Միհիթարայ և Սուրատ-Ռափայէլի յիշատակին (հանդէսներ) 175	
Խմբ. — Պրի. Փօլոս Պուայէի այլեցութիւնը Մ. Արափայէլեան Վարժարանին և Ս. Գաղարու մէջ	176

SOMMAIRE

1935 Avril-Mai N. 4-5

p.

Réd. — L'Abbé Mekhithar dans la lumière du jubilé de la Ste Bible (1500ème anniv. de la version Arm.) 113

Réd. — Le XXe. anniversaire des Martyrs Arméniens (1915-1935) 117

Académie Arménienne

Hatsouni P. V. — Moïse de Khorène reprend sa place dans le V siècle 119

Amadouni P. Garabed. — «L'influence du Droit Romain - Justinien sur le Droit Arménien et degré de cette influence» (Acta Congr. Jurid. Intern. vol. II, Rome, 1935) 131

Mgr. K. Arslanian. — Mémoires des couvents arméniens 139

Beaux-Arts

Sakision Arménag. — La question des porcelaines de Koutaïa (trad. en Arm. par M. Alechah) 142

Recensions

Erémian P. S. — «L'Ethiopie moderne» (par H. Patapan) — «Massis» almanach (par A. Sévan) — «Le camarade Pantchouni» (de E. Odian, publié par l'U. A. E. M.) — «25 ans de vie» (par Hindlian) 158

Biographie

Edouard J. Sakayan. — Le Père Charles de Foucauld (1858-1916) 164

Théâtre

Erémian Aram. — Histoire du théâtre des Arméniens en Russie 150


Presse Arménienne

P. P. E. — Revue des Revues (Anahit) 169

Chronique

Réd. — Fêtes célébrées à la mémoire de l'Abbé Mekhithar et de Moorat-Raphaël (à St. Lazare et au Collège Arm. de Venise) 175

Réd. — Visite de Mr. Paul Boyer, Administrateur de l'Ecole des Langues Orientales de Paris, à St. Lazare et au Collège Arménien M.-R. de Venise 177



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թոյարժութիւն կամ ընկերական աեղմ տրձանակներու յատուկ պարզ յիշատակ մը չէ այն՝ որ հարիւրութսունեւվեց գարուններու ողջոյնով (1749-1935), ամէն տարի, Ապրիլի 27-ին, երկնային օծումով կը լեցնէ Ս. Ղազարու մենաստանն ու անոր հովանուոյն տակ նուրիսագործուած կրթական տունները, ամէն անգամ հոն կաթեցնելով ներշնչում մը հոգեթով, խանդակառութիւն մը որ աստուածային որբարպոշմ կնիքն ունի՝ կրօնքի և Գիտութեան լոյսի ողղումով։

Եւ արդէն անունն իսկ՝ Միհիթար՝ հոմանիշ լոյսի և ջերմութեան հնոցի, անուն մը այնքան մեծ և մեծագործ, չի պարփակուիր հեռաւոր ու մենաւոր այդ կը զեղակի անձկութեան մէջ՝ լուռ ու խորհրդաւոր։ Ամենուրեք ուր կը պաշտուի Հայ Գիրը, ուր կը հնչեն սուրբ անունները Ահակի և Մէկորպի, ովկեաններու ափին թէ բարձրութեանց վրայ կամ ան-

ԲՈՅՄ. ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ 1935

1843-1935

ըմբռնումը կը դառնար համազգային զիտակցութիւն՝ բոլոր խղճերուն մէջ տիրապետող, որուն իրբեւ հանդիսաւոր արտայայտութիւն՝ կը կարդանք Հայ Դրի և գրականութեան պատկառելի ուսուցչի մը գրքի ճակատին. «ՍԱՀԱԿ-ՄԵԽՐՈՊ-ՄԽԻԹԱՐԾԱՆ ԵՐԲՈՒՅԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՎԱԳԻՐԻ ՍԱՀԻԹԵԱՆ» (Մ. Ասրանագ):

Նոյն բան հոյակապ և հանդիսաւոր է, դաւանութեան մը պէս բարձր ու խորին՝ ինչ որ քանդակած է ողբայեալ թէողիկ ալ՝ իր «Տիպ ու տառ» շքեղ կոթողին վրայ, Ա. Սահակի ու Ա. Մեսրոպի անմահութեան տօնին՝ 1912-ին, Գրոց գիւտի 1500-ամեակին առիթով. «ՀԱՄՈՒՅՆ ՀԱՅԵՐՍ ԿՈՉԵԼՈՒ ԵՆԻՑ ԶԻՆՔ (ՄԽԻԹԱՐԾԱԲԸՆԸ) ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՄԱՍՈՒԻՆ ՈՒԽՏԻՆ ԱՅԼ ԵՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ, ՄԵՐ «ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ» Ա.Ա.ԱՆՅ ԱՅԼԵՒՅԱԼԻ »:

Եթէ Մեծն Մխիթարի սքեմաւոր զաւակներուն կամ անոնց զաստիարակած աշխարհիկ պատկառելիներու բերնէն լսէնք այդ սիրալի և անման որակումներու ու գնահատումները՝ դիւրին էր ըմբռնել շարժառիթն և ոգեւորիչը, ու թերեւս ներելի ըլլար մեզի հանել արդար կշիռ՝ արդար մեղմացումով։ Սակայն երբ վկաները՝ բերան համազգային վկայութեան՝ մերձաւոր ու ընտանեկան ոչ մէկ կապ ունին Մխիթարյ Հաստատութեան հետ, և են անոնք կարկառուն մոցեր անաշառ ու անկաշառ, այն ատեն ոչ միայն չի մեղմանար այդ ըմբռնումը, այլ եւս առաւել խորհիլ կու տայ մեզի մեծ Մերաստացոյն վրայ, որ մեր պատմութեան ամէնէն մույլ շրջանին ամէնէն մեծ լոյսն է և կը մնայ տեսիւթի մը պէս չքնազ, խորհուրդի մը պէս աստուծային, միշտ լուսաճանանք և միշտ Մխիթարիչ։

* * *

Բայց ահա նոր լոյսերու ճաճանչում մեր հորիզոնին վրայ, նոր յորելեան, Ա. Գրքի 1500-ամեակի տօնախմբութեան գրադեալ աստուծային Մխիթարիչ։

վանքերու մէջ անհամար ձեռագիրներ դիւ զուած կը մնան, և նիւթական միջոցներն եւս չեն պակսիր մեզ, տակաւին Մխիթարեանց զիմելու պէտք ունիմք գիտնալու համար թէ մեր երանաշնորհ նախիկին վարդապետներ ինչ քարոզեցին և ինչ ուսուցին։ Աշխարհիս վերայ գտնուած բոլոր հայ տապարաններ միասին տակաւին չեն կրցած արտաղերել մէկ տասներորդն այն եկեղեցական նախինի հայ և օտարազգի վարդապետաց զրուածոց զոր Վենեակոյ վանքի տպարան արտաղրած է, և այդու ամեն հայ եկեղեցականի համար ուսման և իւր պաշտօնի մէջ զարգանալու և կը թուելու անհրաժեշտ ուղեցոյցներ ընծայած է։ և ակնարկելով յատկապէս Ս. Գրքի մասին՝ ինչ որ յատուկ նիւթն է օրուանս յորելինաւական նկատողութեան համեմատ՝ կ'ըսէ թէ «Մինչեւ ցայսօր ամենեն հարազատ և անրերի հայկական Աստուծաշնչին վենետիկէ զեւու և Ա. Գրոց այլ և այսանց, որպէս և Շարականաց, Նարեկայ աղօթից մեկնութիւնն մինչեւ ցայսօր ի Վենետիկ տպագրեալ զիրքերէ ուսանելու կարօտն առաւել կամ նուազ գոհացուցիչ կերպով կը լցուցանենք¹։

Եւ այսօր, «Համականակ» երբ «Հայերէն Աստուծաշնչի մեջ գարադարձն առաթիւ» հին փառքերը կ'ուրուագծէ սեղմ ու իմաստալից կերպով, կ'ըսէ թէ հուսկ, զժրախտաբար «իրողութեան մէջ... կորսուած էր զասական հայերէնը, ոսկի կամ արծաթ... Մխիթարեան Հարց Միարանութիւնն էր որ գիտնօրէն ճիգ ըրաւ նախնեաց հայերէնը, այդ մեռեալ լեզուն վերակենացնելու նպատակով... Առաջին զարկը տուաւ նոյն ինքն բարի և մեծագործ Արքայ Մխիթար՝ Վենետիկի խաղաղաէր մենաստանին մէջ, Աստուծաշնչի հրատարակութեամբ... Աղօթքի, զաղափարի և աշխատութեան այս մարզը և տիւպար կրօնաւորը՝ կարող եղաւ ընել առանձինն կամ քանի մը անձնուէր աշխատակիցներով այնպիսի զործ մը, որ յաւէտ արժանի է ազգային երախտագիտութեան և գնահատանքի »:

Եւ արդարեւ, Լուսանորողը՝ այն ինչ վառած մէր Մշակոյթի շիջելափառ ճրագը՝ գրաբար և աշխարհաբար քերականութիւններով, հոգեշահ ընտիր գործերու հրատարկութեամբ, իսկոյն ձեռք կը զարնէր Աստուծաշնչունչի հրատարակութիւն, զիտնալով անոր արժէքը ոչ միայն որպէս աստուծային զիրք հայուն հաւատքը վերաբարձելու, այլ նաև իրբեւ ամէնէն մեծ և հոյակապ կերտուածն ու ներկայացուցիչը մեր Հայ լեզուի բարին ու բանին։

Եթէ առաջինը չէ իրբեւ հայերէն Աստուծաշնչի հրատարակութիւն, քանի որ կայ Ասկանի պատմական մեծ տպագրութիւնը Ամատերգամի մէջ 1666-ին, և նոյնին Բ. տպ. մը ի կ. Պոլիս 1705-ին, սակայն ուղիշ այնքան մեծ արժանիքներ ունի՝ որոնց համար իրաւամբ գնահատուած է համօրէն ազգէն, մողընելով Ասկանեանի անունն և գործը։

Վասն զի թէեւ Մխիթար Արքահայը չունէր առձեռն հայ գրչագիրներ սրբագրելու համար Ասկանեանի մէջ ճանչցած սիալները, ինչպէս կ'ըսէ Զօհրապեան, սակայն գէթ առծամի խոհեմութեամբ ուղղագրութիւններ մը կատարեց լուսանցքներուն վրայ փարիզեան եօթնալեզուեանին համեմատ, և երեւմն բնագիրն ալ ուղեց այնպիսի սխալներէ որ «անտանելի» թուեցան իրեն ու դուրս եկաւ 1735 Նոյեմբերին (ապագրութիւնն սկսուած 1733, Յունիս 15-ին) պատմական ու շքեղ գործը «Լաւագոյն թղթովք, ազնուագոյն պատկերօք, զեղեցկագոյն ծաղկագրօք, զգուշագոյն սրբագրութեամբ, և բազմօք ծախիւք » ինչպէս գործի ճականի զրոշմած է նոյն ինքն երանաշնորհ Հիմնադիրը, և կամ ըստ Զօհրապեանի «Վայելազգոյն և յաւէտ պայծառ յօրինուածով զարդուց»։ և ատոր համար իսկ է որ թէողիկ «Տիպ ու տառ»ի «Շքեղ տպագրութեանց» փունչին զլուկը զետեղած է Մխիթար Արքահայը

1. Տպ. Մանչեսթր. 1901. Անդ.

2. 1935, Մարտ.

«Աստուածաշունչ»ը, իրեւ հնագոյն գեղեցիկը, որ իր ձեւին և տեսակին մէջ կը մնայ միակ և անզուգական։ Ու խորհիլ և բաղդատել գործը հալածուած, փախստական ու աղքատիկ Մխիթարի՝ զործին հետ Ոսկանի, որ ունէր իրեն Մեկենաս և նեցուկ Ամենայն Հայոց կաթողիկոսն և օժանդակ բարեսէր հարուստներ։

Բայց այս տեսակէտներէն աւելի մեզ
հետաքրքրողը կուսանորոգի մեծ ճիզն է Աւ-
տուածաշունչը իր բնիկ հարազատ նախ-
կին ոսկեղէն լեզուին վերածելու՝ ինչպէս
զայն հայացուցած էին Սահակ ու Մեսրոպ.
և եթէ առ ժամն պակսեցաւ միջոցը իր
սրբազն գաղափարն իրագործելու, սա-
կայն կտակ թողուց հիմնական իր սկրզ-

զայ զաւագ բուզոց դրական լի և ը-
բունքը։ Որով 1800-ին սկիզբներն, ելք
Մխիթարյա Ուտար արդէն ձեռք ձգած էր
բաւականաթիւ հայ զրչագիրներ և անոնց
համեմատութեամբ «ցաջ նկատեալ զանբաւ
աղաւաղութիւնս ոսկանեան օրինակի», ի

լոյս ընծայեց Հ. Յ. Զօհրապեանի ձեռքով
«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒԽ» ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ
ԿՏԱԿԱՐԱՆԱՅ. բայտ ձշգրիտ բարգմանորեան
Նախևաց մերոց՝ ի հեղինական հաւատար-
մագոյն թիազրէ ի հայկական բարբառ. եռ-
րդապակի ի լոյս բնձայեալ յընտրեագոյն
գրչագիր գաղափարէ, համեմառորեամբ այլ

և այլ օրինակաց»։ և հուսկ 1860-ին Բարգավառունեան տպագրութիւնը «բատ միաբան վաղեմի զրցագրաց մերոց և յոյն բնագրաց»։

Եւ այսպէս կ'իրագործուէը Միթթար
Արքահօր Նուիրական կտակը, որ անշուշտ
«Երախտազիտական արժանաւոր տրիտուք
մըն է ոսկեղարեան դպրոցի մէջ դարբ-
նուած հայերէնի առաջին մեծ մշակնե-
պան¹».

Այսիթաք Աբբահով չընադ հրատարա-

ութեան երկուհարիւրամեայ յորելեանը՝
735-1935, որ կը միանայ այսօր նոյն սըր-
ազան գործին գրեթէ սկզբնական երեւումի
500-ամեայ մեծ յորելեանին՝ կարծես
արդ զուգաղիպութեամբ չէ, այլ որպէս
ի այս տեսակիշտով ալ ճշգրտուին ճնող-
երուն և վերածնողին, հայ Մշակոյթի
ահերն ստեղծողներուն և անոնց Լուսա-

որոգին միջեւ եղած կապերն և հանգի-
ութիւնը. ինչպէս զուշակած են Միսիթար
քրահօր դաստիարակ կոյսերու կրկին
եսիլները, և որոնց համեմատ Միսիթար
ախ որպէս ռահանորդն է իր ազգին, և
ոկրորդ՝ կաճառակիցը լուսազգեստ փա-
աւոր մարդերու, ինչպէս են արդարեւ
ահակ, Մեսրոպ ու Թարգմանիչները:

Հոս չենք ուզեր երկարել այս պատ-
ական գործին և իր յորելինական տե-
սկէտին մասին՝ առանձին և յատուկ ա-
թիթի մը վերապահած ըլլալով՝ լաւագոյն
հատումով։

Եւ այն ատեն աւելի մանրամասնորէն
խտի խօսինք Միսիթարայ մեծ հոգւոյն
ասին՝ որ կը բորբոքէր իր ազգին սիրոյն
ամար, օրինակներուն՝ զորս կու տար իր
որդերով, իր հիմնական զրօշին և հարա-
ատ ծրագրի մասին՝ որոնց անջինջ կո-
ողը թողած է Աստուածառնչչի վերջա-
անին մէջ:

Ահա մեծը՝ մեծերուն քով աթոռակից,
ուն անունն անզամ կը բաւէ մեր բո-
ղը սիրելի ազգակիցներուն՝ ոչ միայն
զգեպէս հրճուելու այլ նաեւ իր քայլե-
ն վրայէն ընթանալու դէպի այն ճշշ-
տիտ մեծութիւնը՝ որ անհատին փառքն
կ առանա շինութիւնը:

• 117 •

ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԿԱՐՄԻՐ ՔՍԱՆԱՄԵԱԿԻՆ

ՏԱՐԻԵՆԵՐԸ կ'ամցնին, ու մեր ազգային կեանքի հատորը կը ստուարանայ մեր դարաւոր պատմութեան սեւ ու սփիտակ էջերով։

Դէմքեր ու դէպքեր ո՞քան եւ որպիսի, որոնք իրենց տիրանոյշ յիշատակներով մերթ խռովիքի եւ մերթ պարզութեան՝ զիրար փոխանակելով եղանակներու նման այլազան՝ «կրո գան ու կ'երթան»...

Բայց ահա էջ մը որ արեգակի հոլովակմն տակ ամէս տարի, Ապրիլի գտնադրու ծաղիկներուն հետ կը բացուի կարմիր ու մահափոտ, որուն ի տես կը սարսփի մեր Էութիւնը, մեր հոգին կ'ըմբռատանայ, կը զայրագնի, կ'արտասուէ, կը խոռովի՛ կարծես թիւնը, կորսնցներով իր հաւասարակշռութիւնը. այնքան ահաւոր է ան, այնքան զարհութելի, կորսնցներով իր հաւասարակշռութիւնը. այնքան ահաւոր է ան, այնքան զարհութելի, այնքան ցաւոտ եւ այնքան վսեմ ու աղէխարշ միանգամայն:

Եւ այս՝ յիշատակի խորհուրդին առջեւ աղբյու մը՝ որ բառերով չի պատմուիր,
զգացումներով չի արտայայտուիր, ինքն՝ իր ահաւոր օրինակն է, եւ իրմէ դուրս ոչ մէկ
աղբյու իրեն հաւասար :

Ու ամէնքը մէկ ու բաժան՝ քշուեցան, տարուեցան կարծես գայլըրու Վոռումզսիք, ու լիլուեցան, խոշտանգուեցան, պատառ պատառ յօշոտուեցան ճամբաններու Երկայնքին, գետերու յորձանքին մէջ, անդունդներու խորը, ապառաժներէ վար գլորեցան կարակոշկոն ու չարամահ. ոմանց գանկերը փշրեցան, ուրիշներ կացնահար, կիսամահ աղօթեցին ու բողոքեցին Երկնքի՝ յանուն անմահ արդարութեան...: Ո՞քան խումբեր ծովամոյն եւ ինչպիսի մահասարատու ոգորումներով... որքաններ վսեմ կեցուածքով, մահացու գնդակէն ինկան նահատակ: Տեսան լըռներն ու ապառաժներ, եւ լացաւ, սարսուեցաւ բնութիւն, Երկինք, այդքան մահուան եւ այդքան արիութեան վրայ: